

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«__»_____2022թ.

N____-Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետի պահանջներով՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 14.1-ին կետի համաձայն՝ Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացվում է Երևանի քաղաքապետի կողմից համապատասխան թույլտվություն ստացած իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել Հանրապետության հրապարակում, Ազատության հրապարակում և դրանց կից տարածքներում, սույն հավելվածով նախատեսված պայմանների պահպանմամբ:

3. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն սույն հավելվածի 2-րդ կետում նշված վայրերում թույլատրվում է իրականացնել «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքով նախատեսված տոնական օրերին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված այլ տոնական օրերին:

4. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունն սույն հավելվածի 2-րդ կետում նշված վայրերում և սույն հավելվածի 3-րդ կետում նշված օրերին իրականացվում է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պատվերով (նախաձեռնությամբ):

5. Սույն հավելվածի 1-ից 4-րդ կետերով նախատեսված դեպքերից զատ, Երևան քաղաքում Երևանի քաղաքապետի որոշմամբ՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացումը կարող է թույլատրվել նաև սույն հավելվածի 2-րդ կետում չնշված տարածքներում, սույն հավելվածի 3-րդ կետում չնշված օրերին, ինչպես նաև սույն հավելվածի 4-րդ կետում չնախատեսված անձանց պատվերով (նախաձեռնությամբ)՝ սույն հավելվածի պահանջների պահպանմամբ:

6. Տեխնիկական և հատուկ նշանակության հրագործական արտադրատեսակների իրականացումը չի թույլատրվում ցանկացած տեսակի շենքերում, շինություններում և կառույցներում, պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա (սպասարկման) տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, շենքերի

ճակատների ելուստային մասերում, բեմահարթակներում, ինչպես նաև ցույցերի և քայլերթերի ժամանակ:

7. Արգելվում է տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացումը այն վայրերում, որտեղ առկա են ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և հրավառությունների իրականացման այլ օդային խոչընդոտներ:

8. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու վայրի չափերը պետք է համապատասխանեն հրագործական արտադրատեսակների վրա նշված անվտանգ տարածքի նվազագույն չափերին:

9. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունը պետք է իրականացվի «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների պահպանմամբ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը,
առկա խնդիրների առաջարկվող լուծումները.**

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 14.1-ին կետով նախատեսվում է, որ Երևանի քաղաքապետը ՀՀ օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան՝ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տալիս է Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով նախատեսվում է, որ Երևան քաղաքի ավագանին սահմանում է Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները:

Վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով Երևան քաղաքի տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված են լիազորություններ, որոնք ուղղված են Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը: Հիշյալ լիազորություններից է մասնավորապես՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու իրավասությունը, որը վերապահված է Երևան քաղաքի ավագանուն:

Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարցերը կարգավորված են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հրավառությունը՝ հրագործական նյութի (արտադրանքի) և հրագործական բաղադրիչի ծրագրված կիրառումն է, որը կարող է վրանգել մարդու կյանքը, առողջությունը և վնասներ պատճառել շրջակա միջավայրին ու գույքին:* Նույն օրենքով սահմանված է նաև տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության հասկացությունը, այն է՝ *տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները՝ հրավառություններ են, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնիկական սարքավորման որոշակի պայմանների ապահովում:*

Նույն հոդվածում ամրագրված կարգավորումների համաձայն՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 845-Ն որոշմամբ սահմանվել են տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները, իսկ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի հիման վրա համապատասխան իրավասու մարմինների կողմից մշակվել և գործողության մեջ են դրվել մի շարք իրավական ակտեր, որոնք վերաբերվում են հրդեհային անվտանգության կանոնների հաստատմանը: Վերջիններիս համաձայն՝ հատուկ նշանակության հրագործական արտադրատեսակների օգտագործումը, հետևաբար նաև՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացումը չի թույլատրվում՝ ցանկացած տեսակի շենքերում, շինություններում և կառույցներում, պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, շենքերի ճակատների ելուստային մասերում, բեմահարթակներում, մարզադաշտերում, մարզական կառույցներում, կամուրջների վրա, ճամփաբաժաններին, տրանսպորտային մայրուղիներում, երկաթգծի հանգույցներում, հակահրդեհային անբավարար վիճակում գտնվող տարածքներում, ցույցերի և քայլերթերի ժամանակ: Հրագործական արտադրատեսակների օգտագործումից առաջ հարկավոր է՝ նախապես որոշել (ընտրել) հրավառություն անցկացնելու վայրը, տարածքի չափերը պետք է համապատասխանեն արտադրատեսակի վրա նշված վտանգավոր տարածքի առավելագույն չափերին, տարածքում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ:

Կարևորելով բնակչության անվտանգության ապահովման առաջնահերթ խնդիրը, հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելումը՝ դրանց ծանր հետևանքներից խուսափելու, ինչպես նաև քաղաքացիների բնականոն կյանքի, անդորրի պահպանման կարևորությունը, անհրաժեշտություն է առաջացել հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետում ամրագրված կարգավորումը՝ ընդունել հիշյալ իրավական ակտը:

Նախագծի ընդունման նպատակն է կանոնակարգել Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարաբերությունները՝ սահմանելով Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ